7973

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«11» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0077-23

Ձեռնարկողը՝ *«Մայֆորեսթ.էյէմ» ԲՀԿ*
ք. Երևան, Հյուսիսային պող. 8շ.

Գործունեությունը՝ ***Ստեփանավան խոշորացված համայնքի Ուրասար բնակավայրի տարածքում նախատեսվող անտառհիմնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0077-23

< 11 > Մայիս 2023թ.

Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի տարածքում նախատեսվող անտառհիմնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մայֆորեսթ. էյէմ» ԲՀԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզի Ստեփանավան համայնք, Ուրասար բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ **Հայտ)՝** «Մայֆորեսթ.էյէմ» բնապահպանական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) նախատեսում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրում 2023-2024թթ. գարնանը և 2023թ. աշնանը իրականացնել անտառպատում՝ մոտ 360 հա մակերեսով:

Կազմակերպության նպատակն է իրականացնել անտառհիմնման և անտառվերականգնման ծրագրեր Հայաստանի Հանրապետությունում, նպաստել անտառածածկ տարածքների ավելացմանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի ա ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Դիտարկվող տարածքը գտնվում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի վարչական տարածքի հյուսիսային հատվածում, տարածքի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը՝ արոտավայր: Հյուսիսից սահմանակից է Նովոսելցովո, հյուսիս-արևելքից՝ Արմանիս, Ստեփանավան, արևելքից՝ Գոգարան, Պուշկինո, հարավից՝ Արևաշող, Սարահարթ, Գոգարան, հյուսիս-արևմուտքից՝ Կաթնաղբյուր և Կաթնառատ համայնքներին:

Նախատեսվող գործունեության տարածքը լեռնագրական տեսանկյունից գտնվում է Բազումի լեռնաշղթայի կենտրոնական մասում՝ Գոգարան լեռնաբազուկի ստորին բարձրության լանջերին՝ շրջապատված Չքնաղի և Սպիտակի լեռնաբազուկներով: Տարածքի կլիման՝ ըստ ՀՀ կլիմայական շրջայնացման, չափավոր ցուրտ-խոնավ է, օդի տարեկան միջին ջերմաստիճանը -11-ից 24°C, մթնոլորտային տեղումները՝ 650-850 մմ: Լեռնագագաթներին և բարձրադիր այլ ջրբաժաններում ձնածածկույթը պահպանվում է մինչև մայիս–հունիս ամիսները:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Համաձայն Հայտի՝ համայնքային անտառպատման ենթակա տարածքները գտնվում են ծովի մակարդակից 1700 - 2400 մ բարձրությունների միջակայքում, 5-ից մինչև 55 աստիճան թեքությունների վրա:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է հանրապետության խոնավ շրջանում, տեղակայված է Սևգետ գետի ջրհավաք ավազանի արևմտյան մասում: Հիմնական հողային ծածկույթը լեռնային մարգագետնատափաստանային և լեռնամարգագետնային հողեր են:

Համաձայն Հայտով ներկայացված բուսաբանական հետազոտությունների արդյունքների՝ անտառպատման համար նախատեսվող տարածքում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը և ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

Հետազոտվող տարածքի ֆաունան տիպիկ է հյուսիսային Հայաստանի բաց լանդշաֆտների և անտառների համար: Համաձայն կենդանաբանական հետազոտությունների արդյունքների՝ նշված տարածքում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված՝ Անտառակատու «Felis silvestris Schreber» և Մնեմոզինա կամ սև ապոլոն (*Parnassius mnemosyne* L.) կենդանատեսակները, որոնց բնականոն կենսակերպը չվնասելու համար նախատեսվել են համապատասխան միջոցառումներ: Տարածքում հայտնի են նաև Անդրկովկասի և Կովկասի էկոտարածաշրջանի ութական էնդեմիկ տեսակներ:

Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների արդյունքում նշված տարածքում անտառպատման միջոցառումների իրականացման վերաբերյալ մասնագետների կողմից որևէ առարկություն չի նշվել:

Անտառպատման համար հայցվող տեղամասը եզրագծվում է հետևյալ կոորդինատային կետերով՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական համակարգով՝

#	X	Y	#	X	Y
1.	8436583.6	4538835.8	30.	8438320.8	4540346.8
2.	8436482.8	4538889.6	31.	8438399.0	4540409.2
3.	8436286.3	4538892.7	32.	8438475.1	4540410.6
4.	8436107.0	4538836.4	33.	8438473.3	4540360.1
5.	8436006.0	4538898.4	34.	8438405.7	4540234.5
6.	8435969.4	4538965.2	35.	8438323.2	4540121.3
7.	8435930.1	4539056.6	36.	8438192.1	4539949.9
8.	8435750.8	4539209.2	37.	8438208.4	4539809.8
9.	8435693.6	4539375.1	38.	8438223.8	4539653.6
10.	8435792.8	4539550.5	39.	8438259.9	4539584.7
11.	8436033.9	4539606.9	40.	8438369.7	4539501.7
12.	8436268.2	4539662.8	41.	8438397.6	4539412.2
13.	8436459.5	4539738.5	42.	8438418.5	4539222.2
14.	8436548.5	4539827.8	43.	8438386.2	4539025.7
15.	8436727.4	4539813.9	44.	8438368.5	4538813.8
16.	8436825.7	4539834.1	45.	8438338.0	4538760.4
17.	8437007.2	4539931.0	46.	8438211.5	4538640.1
18.	8437186.5	4540052.0	47.	8437997.5	4538533.8
19.	8437466.5	4540252.2	48.	8437781.0	4538462.4
20.	8437558.1	4540325.8	49.	8437535.5	4538449.5
21.	8437607.1	4540420.3	50.	8437317.9	4538413.6
22.	8437774.6	4540539.4	51.	8437083.6	4538374.0
23.	8437951.8	4540574.4	52.	8436966.9	4538388.2
24.	8438047.6	4540492.6	53.	8436881.7	4538405.2
25.	8438061.2	4540439.9	54.	8436786.4	4538520.4

26.	8438055.6	4540388.5	55.	8436733.3	4538640.7
27.	8438080.5	4540372.5	56.	8436630.6	4538748.5
28.	8438176.3	4540347.3	1.	8436583.6	4538835.8
29.	8438260.2	4540318.5			

Նկարագրվող տարածքում կպչողականությունը, աճն ու զարգացումը պայմանավորված է էկոլոգիական համեմատաբար նպաստավոր պայմանների ամբողջությամբ, բարձրության գոտիականությամբ, հողաշերտի հաստությամբ, բերրիությամբ, միջավայրի խոնավությամբ:

Անտառային մշակույթների հիմնադրման հիմնական մեթոդներն անտառի ցանքսն ու տնկումն է, օգտագործելով տարվա նպաստավոր ժամանակաշրջանները. աշնանը՝ ցանքս և տնկում, իսկ գարնանը՝ տնկում: Նախատեսվում է կիրառել նաև հիմնադրման համակցված ձևը, երբ անտառի ցանքսն ու տնկումը զուգակցվում են:

Մշակույթների սկզբնական խտությունը 1հա հաշվով նախատեսվում է մինչև 2,6 հազար հատ, իսկ համեմատաբար չոր տեղամասերում մինչև 3 հազար հատ: Սերմերի ցանքսի դեպքում ցանքատեղերի քանակությունն ավելանում է 4 հազարով: Թփերը մշակույթների կազմի մեջ ունեն 10%-ից ոչ ավել ներկայություն: Մշակույթների խտության չափի հետագա կարգավորումն իրականացվելու է սաղարթների միակցումից հետո՝ խնամքի հատումների ժամանակ:

360 հա տարածքում նախատեսվում է տնկել կամ ցանել մոտ 1080000 տնկի, որից շուրջ 600000 կկազմեն գլխավոր ծառատեսակները, 320000՝ ուղեկցող ծառատեսակներ և 160000 թփեր: Տեսակների հարաբերակցությունը և ընտրությունը իրականացվում է օրոգրաֆիկ, հողակլիմայական պայմանների առանձնահատկություններից ելնելով:

Համաձայն Հայտի՝ տեսակների ընտրության ժամանակ հաշվի է առնվել դրանց կենսաէկոլոգիական առանձնահատկությունները և բնական աշխարահագրական արեալը: Անտառպատման նպատակներին և բնակլիմայական, անտառաճման պայմաններին համապատասխան օգտագործվելու են լավ հարմարեցված տեղածին տեսակներ, մասնավորապես խոշորառէջ կաղնի, արևելյան հաճարենի, սովորական սոճի, սրատերև թխկի, բարձրլեռնային թխկի, սովորական հացենի, լիտվինովի կեչի, կովկասյան տանձենի, արևելյան խնձորենի, թփատեսակներից՝ թանթրվենի, հաղարջ, ասպիրակ, կիպրոս: Անտառային մշակույթներում ներմուծվող տեսականին բաժանվում է գլխավոր (գերակշռող ու հիմնական, առաջին շարահարկը զբաղեցնող) և ուղեկցող (գլխավոր տեսակի աճն ու զարգացումը խթանող, ինչպես նաև հողբարելավվող, երկրորդ շարահարկը ձևավորող) տեսակների, որոնց հարաբերակցությունը տարածքի առանձին մասերում տարբերվելու է կախված տեղանքի օրոգրաֆիկ և հողակլիմայական պայմանների առանձնահատկություններից: Համաձայն Հայտի՝ ընկուզենիները ընդհանուր տարածքում սխեմայի մաս չեն կազմում և փոքր քանակությամբ (4150 հատ) տնկվելու են մեկ փոքր հատվածում:

Անտառի ցանքսի համար մեկ հեկտարի վրա համատարած՝ 1x2,5 մ տեղադրմամբ՝ 4000 ցանքսատեղով, շարքային դասավորվածությամբ փորվելու են 0,25x0,25x0,25 մ չափի փոսիկներ: Փոսիկը պատրաստելու համար նշված մասը ճիմազրկվելու, հողը փխրեցվելու է 0,25x0,25 մ տրամագծով մինչև 0,25 մ խորությամբ ու քարազրկվելու է: Պատրաստված փոսիկներում 4-5 սմ խորությամբ կցանվեն կաղիններ, յուրաքանչյուրում 3 հատով: Կաղնու սերմերի պահանջարկը 1 հա հաշվով կազմում է մոտ 60 կգ:

Անտառի տնկման համար մեկ հեկտարի վրա համատարած՝ 1,25x3 մ տեղադրմամբ՝ 2660 հատ տնկատեղով, շարքային դասավորվածությամբ փորվելու են 0,25x0,25x0,25 մ չափի փոսիկներ: Փոսիկը պատրաստելու համար նշված մասը ճիմազրկվելու, հողը փխրեցվելու է 0,25x0,25 մ տրամագծով մինչև 0,25 մ խորությամբ ու քարազրկվելու է:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Պատրաստված փոսիկներում կտնկվեն են 1-2 տարեկան սերմնաբուսակներ: Հողի նախապատրաստական աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Խնամքի միջոցառումներից նախատեսվում է ագրոտեխնիկական խնամք (քաղհան, հողի փխրեցում, մուլչապատում)՝ ապահովելու բարենպաստ պայմաններ անտառմշակույթների կպչողականության և նորմալ աճի համար: Այնուհետև իրականացվելու է խնամքի անտառտնտեսական միջոցառումներ (լուսավորման, մաքրման, նորացման հատումներ): Խնամքի աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2023, 2024, 2025 թթ. մայիս, հունիս ամիսներին: Տարեկան խնամքի հաճախականությունը պայմանավորված է լինելու բնակլիմայական պայմաններով:

Համաձայն Հայտի՝ սկզբնական խտությունը պահպանելու նպատակով նախատեսվելու են անտառային մշակույթների լրացման միջոցառումներ: Կանխատեսվում է մշակույթների մինչև 20%-40% անխուսափելի անկում: Լրացման աշխատանքները կատարվելու են ի հաշիվ չորացած բույսերի փոխարեն լրացուցիչ տնկման կամ ցանքսի աշխատանքներ: Օգտագործվելու են տվյալ տարածքում հիմնադրված մշակույթների տարիքին համապատասխան տնկիներ կամ սերմեր:

Տնկիների վրա մարդածին գործոնի ազդեցությունը կանխելու, տարածքը չկանխատեսված արածեցումից զերծ պահելու և այլ գործոնների ազդեցություններից խուսափելու անհրաժեշտությունից տարածքը կցանկապատվի (ընդհանուր 9000 մ) և կնշանակվեն անտառապահներ:

Ցանկապատումն իրականացվելու է երկաթբետոնե, փայտե հենասյուներով և մետաղական ձողերով, միջհենասյունային հեռավորություններն ամրացվելու են մետաղական փշալարով: Հենասյուններն ամրացնելու նպատակով փորվելու են 15 սմ շառավղով և 40–45 սմ խորության փոսեր, որտեղ հենասյուները տեղադրվելուց հետո իրականացվելու է նույն տեղամասից հանված հողով փոսալցում և հենասյան ամրացում: Փշալարի ստորին շերտի և գրունտի միջև հեռավորությունը տատանվում է 40-60 սմ, որը տեղանքում առկա կենդանիներին իրենց բնական արեալում չի խոչընդոտի տեղաշարժվել:

Անտառհիմնման համար նախատեսված տեսակներն աճեցվում են Կազմակերպության մասնագիտացված տնկարաններում՝ պահպանելով ֆիտոսանիտարիայի բոլոր սահմանված նորմերը:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա մշտական և ժամանակավոր աշխատանքով ապահովել նշված և հարակից տարածքների ավելի քան 150 մարդու:

Նախատեսվող գործունեությունը և այնուհետև ստեղծված անտառները որպես հետևանք ունեն շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մի շարք կարևորագույն գործառույթներ, որոնցից են հողաշերտերի էրոզիայից և դեգրադացումից պաշտպանելը, կենսաբանական բազմազանության պաշտպանությունը, բնակմիջավայրերի ընդլայնումը, ջրերի մակերևութային հոսքի կարգավորումը, քամիների պոռթկումների ժամանակ դրանց մեղմումը, խոնավության և ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների նվազեցումը և այլն:

Ընդհանրացնելով ռիսկերը՝ կարելի է նշել, որ նախատեսվող գործունեությունը, ունենալով բնապահպանական ուղղվածություն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության տեսանկյունից ունի նվազագույն ռիսկեր, որոնք կառավարելի են:

Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության տեսակետից գնահատվելով որպես նվազագույն ռիսկ, պարբերական մշտադիտարկման կարիք չունի: Սակայն անտառային մշակույթների խնամքի միջոցառումների ընթացքում ձեռնարկողի կողմից նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի քանակական և որակական դաշտային և կամերալ ուսումնասիրություններ, որոնք ներառվելու են համապատասխան հաշվետվություններում:

Համաձայն Հայտի՝ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր վնասակար ազդեցությունների մեղմման և կանխարգելման նպատակով բնապահպանական պլանով նախատեսվել են միջոցառումներ, այդ թվում.

- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում տվյալ տեղամասի առանձնացում որպես պահպանվող գոտի,
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում ինտենսիվ աշխատանքներից խուսափում,
- Անտառպատման ժամանակ օգտագործվող մեքենաների ոչ կարգավորված տեղաշարժի բացառում՝ հողի մակերեսի վրայով: Տեղաշարժի ապահովում միայն գոյություն ունեցող կամ նշանակված ժամանակավոր ճանապարհներով,
- Անտառհիմնման տարածքում վնասատուների դեմ պայքարն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և ենթաօրենսդրական ակտերով սահմանված միջոցառումներ, այդ թվում սանիտարական պայքարի միջոցառումներ, նախապատվությունը տալով օրգանական պայքարի միջոցառումներին,
- Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներից խուսափելու համար աշխատողներին պաշտպանիչ իրերի տրամադրում,
- Աշխատանքներն իրականացնել ապահովելով հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պաշտպանությունը և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. նախատեսվող գործունեությունը բնական էկոհամակարգերի և ստեղծվող անտառների համակցության արդյունքում կբարելավի շրջակա միջավայրը, ինչպես նաև տեղային մակարդակով կմեղմի կլիմայի գլոբալ փոփոխությունը: Նախատեսվող աշխատանքները համընկնում են ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված անտառածածկ տարածքների ավելացմանը:

Նախագծի իրականացման ընթացքում կազմակերպությունը նախատեսում է կազմակերպել «համայնքային անտառ» նախաձեռնությունների կայացմանն ուղղված միջոցառումներ, դրանց միջոցով հնարավոր դարձնել համայնք-անտառ կայուն և անընդհատ զարգացող գոյակցությունը: Նախագծի իրականացման արդյունքում անտառածածկ տարածքների ավելացումը շրջակա միջավայրի վրա կունենա բնապահպանական, սոցիալ-տնտեսական, կրթական դրական ազդեցություն:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Լոռու մարզպետարանը, Ստեփանավանի համայնքապետարանը: Հայտը լրամշակվել է հաշվի առնելով նաև ստացված առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի Ուրասար բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Անտառպատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել հավելյալ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական նորմերը:

- ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների բնականոն կենսակերպը չխաթարելու նպատակով պահպանել Հայտով նախատեսված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմանն ուղղված միջոցառումները, չբավարարելու դեպքում դիմել համապատասխան լիազոր մարմնին:
- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշման պահանջներով:
- Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացած կենցաղային աղբի կառավարումն իրականացնել համաձայն ՀՀ գործող օրենքներով սահմանված նորմերի և պահանջների:
- Պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մայֆորեսթ. էյէմ» ԲՀԿ կողմից ներկայացված Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրում նախատեսվող անտառհիմնման աշխատանքների Հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան